

ՌՈՒՍԱՑ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ 1000-ԱՄՅԱԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Համայն Վրաց կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի հրավերով, ապրիլի 21-ին Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի անունից Ռուսաց մկրտության 1000-ամյակի գիտաժողովին ներկա եղավ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը՝ ընկերակցությամբ Տ. Հովհաննես ավագ քահանա Դանիելյանի:

Գիտաժողովը տեղի ունեցավ Վրաց Պատրիարքարանի մեծ դահլիճում՝ նախագահությամբ Նորին Սրբություն Իլիա Բ կաթողիկոսի: Կաթողիկոսի աջակողմում տեղ էր հատկացված Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցչին:

Գիտաժողովին ներկա էին զանազան կրոնական հարանվանությունների հոգևորականներ, եկեղեցիների վարչությունների անդամներ, գիտաշխատողներ, ուսանողներ, Ռուսաստանից և այլ տեղերից ժամանած հյուրեր:

Գիտաժողովը տևեց երեք ժամ: Կարդացվեցին տասնյակ զեկուցումներ:

Հանդիսությունն ավարտվեց խաղաղության, ժողովուրդների բարեկամության, եղբայրական սիրո մթնոլորտում, ինչպես նաև բարձր գնահատանքի զգացմունքներով ռուս մեծ ժողովրդի և նրա փառավոր Եկեղեցու նկատմամբ: